



## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ՈՐՈՇՈՒՄ

15 հունիսի 2021 թվականի թիվ 124-Ս

ք. Երևան

#### «ՀԻՔՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՍԱԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով դիմումների հիման վրա 2021 թվականի հունիսի 25-ին հարուցված թիվ 10 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*.

2021 թվականի հունիսի 25-ին Հանձնաժողով մուտքագրված «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՉԵՔԹ» ՍՊ ընկերության և «ԱՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության («ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՉԵՔԹ» ՍՊ և «ԱՄԵԴԻԱ» ՍՊ ընկերությունների միասին հիշատակման դեպքում՝ դիատրիբյուտորներ) դիմումներում նշված են «ՀԻՔՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ ցանցային օպերատոր) կողմից տեսալսողական ծրագրերն առանց պայմանագրային հիմունքների վերահաղորդելու փաստերի վերաբերյալ:

«ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՉԵՔԹ» ՍՊ ընկերությունը 2021 թվականի հունիսի 10-ին Հանձնաժողով մուտքագրված դիմումով տեղեկացնում է, որ ՀՀ տարածքում տեսալսողական ծրագրերի վերահաղորդման ծառայություններ մատուցող ցանցային օպերատորի կողմից («ՋԻ ԷՆ ՄԻ ԱԼՖԱ» ՓԲ ընկերության ապրանքային նշանի ներքո՝ «Ռոստելեկոմ») առանց համապատասխան իրավական հիմքերի (պայմանագրի) իրականացվում է «2X2» տեսալսողական ծրագրի վերահաղորդում և նշում է, որ ցանցային օպերատորը ոչ միայն չի կարող ունենալ համապատասխան պայմանագիր և/կամ թույլտվություն, այլև տվյալ տեսալսողական ծրագիրը ընդհանրապես չի կարող վերահաղորդվել ՀՀ տարածքում: Այն, որ ցանցային օպերատորի կողմից վերոնշյալ տեսալսողական ծրագիրը անօրինական վերահաղորդվում է, հիմնավորվում է «Ռոստելեկոմ» ընկերության պաշտոնական կայքում տեղադրված հայտարարությամբ, որին և հղում է տրվում դիմումում:

«ԱՄԵԴԻԱ» ՍՊ ընկերությունը 2021 թվականի հունիսի 16-ին Հանձնաժողով մուտքագրված դիմումով նույնպես տեղեկացնում է, որ ցանցային օպերատորը «Ռոստելեկոմ» ընկերության հետ համատեղ առանց համապատասխան իրավական հիմքերի (պայմանագրի) իրականացնում է «Disney Channel» տեսալսողական ծրագրի

վերահաղորդում, որի թույլտվությունն առկա չէ տվյալ տեսալսողական ծրագրի իրավատիրոջ կողմից, քանի որ տվյալ տեսալսողական ծրագիրը ընդհանրապես ՀՀ տարածքում հեռարձակելու թույլտվություն տրված չէ իրավատիրոջ կողմից: Այն, որ ցանցային օպերատորի կողմից «Disney Channel» տեսալսողական ծրագիրը վերահաղորդվում է, հաստատվում է «Ռոստելեկոմ» ընկերության ծրագրից, որի վերաբերյալ լուսանկարները և համապատասխան տեսագրությունը «ԱՄԵԴԻԱ» ՍՊ ընկերությունը կցել է դիմումին:

Ավելի ուշ, ի պատասխան Հանձնաժողովի «2X2» և «Disney Channel» տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորներ հանդիսանալու վերաբերյալ պարզաբանում ներկայացնելու գրության, «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵԲԹ» և «ԱՄԵԴԻԱ» ՍՊ ընկերությունները 2021 թվականի հունիսի 25-ին Հանձնաժողով մուտքագրված դիմումներով հայտնում են, որ իրենք չեն հանդիսանում համապատասխանաբար «2X2» և «Disney Channel» տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորները, սակայն իրենց կողմից դիմումներ ներկայացնելը պայմանավորված է ոչ թե այն հանգամանքով, որ ցանցային օպերատորի կողմից խախտվում է դիստրիբյուտորների իրավունքը, այլ նրանով, որ ցանցային օպերատորի կողմից թույլ է տրվում ոլորտը կանոնակարգող իրավական պահանջների խախտում, ինչը հանգեցնում է տվյալ ոլորտում գործունեություն իրականացնող մյուս տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ անբարեխիղճ մրցակցության դրսևորմանը և ամեննին պարտադիր չէ լինել որևէ տեսալսողական ծրագրի դիստրիբյուտոր և/կամ իրավատեր, որպեսզի հնարավորություն և/կամ իրավասություն ունենան ներկայացնելու ոլորտում առկա օրենսդրական խախտումները և պահանջել դրանց վերացումը: Եվ այդ հանգամանքը չի սահմանափակում իրենց պահանջելու լիազոր մարմինն վերացնելու համապատասխան օրենսդրության պահանջների խախտումները, քանի որ «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) որպես կարգավորող մարմին հանդես է գալիս Հանձնաժողովը և Հանձնաժողովին է պատկանում Օրենքով սահմանված պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելը:

Դիստրիբյուտորներն իրենց դիմումներում գտնում են, որ ցանցային օպերատորի կողմից թույլ է տրվել Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի խախտում և Հանձնաժողովին խնդրում են ձեռնարկել համապատասխան միջոցներ վերացնելու խախտումները:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետով և հիմք ընդունելով դիստրիբյուտորների դիմումները՝ 2021 թվականի հունիսի 25-ին ցանցային օպերատորի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2021 թվականի հունիսի 28-ին ծանուցել է ցանցային օպերատորին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները, բացատրությունները և տեսալսողական ծրագրերի վերահաղորդման իրավական հիմքերը:

Վարչական վարույթի ընթացքում «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵԲԹ» ՍՊ ընկերությունը Հանձնաժողով ևս մեկ դիմում է ներկայացրել, որով տեղեկացնում է, որ ցանցային օպերատորի կողմից առանց համապատասխան իրավական հիմքերի (պայմանագրի)

իրականացվում է «Disney Channel» տեսալսողական ծրագրի վերահաղորդում, որի համար ցանցային օպերատորը չունի որևէ թույլտվություն և/կամ համաձայնություն, ավելին, չունի այդ տեսալսողական ծրագիրն իր կայքում և/կամ որևէ գովազդային նյութում՝ բուկլետում, ներառելու իրավասություն և այս փաստը հիմնավորվում է ցանցային օպերատորի կողմից հարատարակված գովազդային գրքույկում: «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՉԵՔԹ» ՍՊ ընկերությունը նշում է, որ ցանցային օպերատորը չունի նշված տեսալսողական ծրագրի նկատմամբ որևէ իրավունք, որը հաստատվում է տվյալ տեսալսողական ծրագրի իրավատիրոջ գրությամբ, որը ներկայացրել է դիմումին կից: Բացի այդ, «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՉԵՔԹ» ՍՊ ընկերությունը հայտնում է, որ հանդիսանալով մի շարք տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտոր, այդ թվում՝ «Setanta Sports Eurasia» և «Setanta Sports Eurasia Plus» տեսալսողական ծրագրերի, ցանցային օպերատորին չի տրամադրել դրանց վերահաղորդման թույլտվություն, այսինքն առկա չէ դիստրիբյուտորի հետ կնքված պայմանագիր, ինչի արդյունքում էլ ստեղծվում է անբարեխիղճ մրցակցային միջավայր ոլորտում բարեխիղճ գործունեություն իրականացնող այլ տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ:

«ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՉԵՔԹ» ՍՊ ընկերությունը նշում է նաև, որ Հանձնաժողովը 2021 թվականի ապրիլի 14-ի թիվ 04-326 գրությամբ տրամադրել է տեղեկություն՝ Հայաստանի Հանրապետությունում գործող ցանցային օպերատորների կողմից վերահաղորդվող այն տեսալսողական ծրագրերի մասին, որոնց դիստրիբյուտորը հանդիսանում է «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՉԵՔԹ» ՍՊ ընկերությունը և ըստ այդ տեղեկության ցանցային օպերատորի կողմից ի թիվս այլի վերահաղորդվում է «Setanta Sports Eurasia» և «Setanta Sports Eurasia Plus» տեսալսողական ծրագրերը:

Հանձնաժողովն ի լրումն 2021 թվականի հունիսի 28-ին ցանցային օպերատորին հասցեագրված վարչական վարույթի հարուցման ծանուցման, այս խախտման վերաբերյալ ևս տեղեկացրել է ցանցային օպերատորին և հայտնել, որ նույն վարչական վարույթի շրջանակներում այս հարցի վերաբերյալ ևս կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները, բացատրությունները և տեսալսողական ծրագրերի վերահաղորդման իրավական հիմքերը:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում ցանցային օպերատորը 2021 թվականի հուլիսի 1-ին Հանձնաժողով գրավոր բացատրություն է ներկայացրել այն մասին, որ չի վերահաղորդում «2X2», «Disney Channel», «Setanta Sports Eurasia» և «Setanta Sports Eurasia Plus» տեսալսողական ծրագրերը:

Հանձնաժողովը ղեկավարվելով Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով և 42-րդ հոդվածով, համաձայն որի Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով և հիմք ընդունելով Հանձնաժողովի նախագահի 2021 թվականի հուլիսի 8-ի թիվ 23-Ա հրամանը՝ իրականացրել է ցանցային օպերատորի մոտ մշտադիտարկում՝ տեղում դիտարկում իրականացնելու միջոցով:

Տեղում դիտարկում իրականացնելու արդյունքում 2021 թվականի հուլիսի 9-ին Հանձնաժողովի կողմից կազմվել է արձանագրություն, համաձայն որի՝ հեռարձակող կայանում ժամը՝ 11:00-11:15-ն ընկած ժամանակահատվածում իրականացված մշտադիտարկման արդյունքում պարզվել է, որ ցանցային օպերատորի կողմից չեն

վերահաղորդվում «2X2», «Disney Channel», «Setanta Sports Eurasia» և «Setanta Sports Eurasia Plus» տեսալսողական ծրագրերը:

***Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.***

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը՝ իրականացնում է Հեռարձակողների և օպերատորների գործունեության մշտադիտարկում:

Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 18-րդ մասերը սահմանում են.

«1. Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով: Ուղղակի դիտարկման արդյունքները կարող են համադրվել տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանների տվյալներին:

3. Տեսալսողական մեդիայի մասին օրենսդրության պահանջների խախտման վերաբերյալ տեղեկություններ ունենալու դեպքում օպերատորի գործունեության տեղում դիտարկումն իրականացվում է կարգավորող պետական մարմնի նախագահի հրամանի հիման վրա:

18. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը կարող է հիմք հանդիսանալ վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայել որպես վարչական վարույթի ապացույց»:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են վարչական վարույթի մասնակիցների կողմից ներկայացրած փաստերը, որոնք համադրվել են Հանձնաժողովի տեղում դիտարկման արդյունքներին և «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի խախտում չի հայտնաբերվել:

Այսպիսով, հաշվի առնելով այն փաստը, որ ցանցային օպերատորի և դիստրիբյուտորների միջև չկա կնքված տեսալսողական ծրագրերի վերահաղորդման իրավունքի տրամադրման պայմանագիր, իսկ տեղում դիտարկման արդյունքում էլ պարզվել է, որ ցանցային օպերատորի կողմից դիմումներում նշված տեսալսողական ծրագրերը չեն վերահաղորդվում, ուստի վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է, որ վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայության հիմքով ցանցային օպերատորի նկատմամբ հարուցված թիվ 10 վարչական վարույթը ենթակա է կարճման:

Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ոչ սեփական տեսալսողական հաղորդումները կարող են հեռարձակվել միայն դրանց հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի առկայության դեպքում:

Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գործող Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը ցանցային օպերատորի լիցենզիա ստացած անձի կողմից կարող են

վերահաղորդվել տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի կամ հեռարձակողի հետ պայմանագրի հիման վրա:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված է՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման հետևյալ հանգամանքների առկայության դեպքում՝

1) վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայությունը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) վարչական տույժ նշանակելու մասին.

2) գործի վարույթը կարճելու մասին:

Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է բանավոր դիտողություն հայտարարելու, նյութերը ընկերական դատարանի, ձեռնարկությունում, հիմնարկում, կազմակերպությունում և դրանց կառուցվածքային ստորաբաժանումներում ստեղծված՝ հարբեցողության դեմ պայքարի հանձնաժողովի, հասարակական կազմակերպության կամ աշխատավորական կոլեկտիվի քննությանը հանձնելու կամ դատախազին, նախաքննության կամ հետաքննության մարմնին հանձնելու դեպքում, ինչպես նաև սույն օրենսգրքի 247 հոդվածով նախատեսված հանգամանքների առկայության դեպքում:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի, 49-րդ հոդվածի 1-ին մասի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետի, 282-րդ հոդվածի դրույթները՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց**.

1. Կարճել «ՀԻԲՐԻԴ ՍՈՒՅՈՒՇՆՍ» ՍՊ ընկերության նկատմամբ հարուցված թիվ 10 վարչական վարույթը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն վարչական վարույթի մասնակիցներին պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

15 հուլիսի 2021թ.  
ք. Երևան